տուրքի գումարը, միաժամանակ արձանագրելով, որ Հայցվորի ներկայացուցիչը ներկայացված հայցադիմումով խնդրել է նաև Պատասխանողից հօգուտ Հայցվորի բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը, հետևաբար Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. Տարոն Մաթևոսյան Դավիթի ԱՁ-ի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀՄ-ի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

անվավեր ճանաչել «Տարոն Մաթևոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի ՀԲՀ-ի 08.08.2025 թվականին թիվ N-494 Ա հրամանը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀՄ-ից հօգուտ Տարոն Մաթևոսյան Դավիթի ԱՁ-ի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am